Վահան Ա. Տեր-Ղևոնդյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1208-1216 թթ.)

Բանալի բառեր – Լևոն Ա Մեծագործ, Ալ-Մալիք ալ-Ադիլ, Կիլիկիայի հայկական թագավորություն, Եգիպտոսի Այյուբյան սուլթանություն, Անտիոք, Տրիպոլիսի կոմսություն, Իկոնիայի սուլթանություն, Հալեպի Այյուբյան սուլթանություն, Իբն ալ-Ադիմ, Իբն Ուասիլ:

Ավելի քան մեկուկես տասնամյակ (1201-1216 թթ.) Հայոց թագավորության և Տրիպոլիսի կոմսության միջև անզիջում պայքար էր ընթանում Անտիոքին (հետևաբար նաև նույնանուն իշխանությանը) տիրելու համար: Բոհեմունդ IV -ը[1] ցանկանում էր իր պետությանը միացնել այդ հարուստ և ռազմագիտական նշանակություն ունեցող կենտրոնը, իսկ Լևոն Մեծագործը (1187-1219 թթ.) ձգտում էր Անտիոքի գահին բազմեցնել իր եղբոր թոռանը՝ Ռուբեն-Ռայմոնդին:

Այս երկարատև հակամարտությունը պատմագրության մեջ հաճախ կոչվում է «Անտիոքյան պատերազմ»: Միաժամանակ սա էլ իր հերթին բաղկացած էր մի շարք փոքր պատերազմներից, ռազմական բախումներից, դաշինքների կամ հակադաշինքների հաստատումից ու դիվանագիտական ակտիվ գործունեությունից:

Տարածաշրջանի երկրները խիստ անհանգստացած էին Անտիոքի ճակատագրով: Ընդ որում, երկու լատին կենտրոնների (Տրիպոլիս, Անտիոք) միավորումը նրանց համար այդքան մեծ վտանգ չէր ներկայացնում, որքան Անտիոքի փաստացի միացումը ռազմաքաղաքական ու տնտեսական վերելք ապրող Կիլիկյան Հայաստանին: Ահա թե ինչու հարևան պետությունները և առաջին հերթին Իկոնիայի սելջուկյան ու Հալեպի Այյուբյան սուլթանությունները, միանալով Բոհեմունդ IV-ին, ստեղծել էին հակակիլիկյան մի համագործակցություն:

Վերոհիշյալ պատերազմների շարքից էր Կիլիկյան Հայաստան-Հալեպի

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.11. 2016:

1 Տրիպոլիսի կոմսն էր 1187-1233, միաժամանակ նաև Անտիոքի իշխանը կամ միացյալ Անտիոք-Տրիպոլիսի կոմսը 1201-1216 և 1219-1233 թվականներին:

սուլթանություն պատերազմը (1203–1206 թթ.), որի ընթացքում Լևոն Ա–ը մեկ անգամ ևս իրեն դրսևորեց որպես փայլուն զորավար ու մի քանի տպավորիչ հաղթանակներ տարավ: Արդյունքում ստորագրվեց հաշտության պայմանագիր: Պատերազմի կարևոր արդյունք կարելի է համարել այն, որ Հալեպի սուլթանությունը դադարեցրեց ռազմական գործողություններն ընդդեմ Կիլիկիայի և շուրջ երկու տարի (1206–1208 թթ.) բախումների մեջ չմտավ Հայոց թագավորության հետ:

1206 թ. ազատվելով վտանգավոր հակառակորդից՝ Լևոն Ա–ն հնարավորություն ստացավ վերսկսել զինված պայքարը Անտիոքի իշխանության օրինական ժառանգ Ռուբեն–Ռայմոնդի իրավունքների պաշտպանության համար՝ ստիպված չլինելով պատերազմել միաժամանակ երեք ճակատներով:

Պայքարին մասնակցող երկու խմբավորումներից մի կողմում Բոհեմունդ IV Միականին էր, որին աջակցում էին Անտիոքի ավագանին, հույն պատրիարքն ու «Տաճարական ասպետները» (''Les Templiers''), իսկ մյուս կողմում՝ Ռուբեն–Ռայմոնդը, քաղաքի լատին պատրիարքը, «Հյուրընկալ ասպետները»[2] (''Les Hospitaliers''): Այս խմբավորումը վայելում էր Լևոն Մեծագործի ու հայկական բանակի լիակատար աջակցությունը: Հռոմի պապ Ինոկենտիոս III–ը (1198–1216 թթ.) ևս պաշտպանում էր Լևոնի զարմիկի թեկնածությունը Անտիոքի գահին որպես օրինական ժառանգ: Փոխարենը՝ Հայոց թագավորության աճող ու հարևանների համար տարեցտարի վտանգավոր դարձող ռազմական հզորությունը Կիլիկիայի դեմ էր հանել հարևան բոլոր պետություններին:

Ահա այս իրավիճակում Ռուբենին իշխանության բերելու հերթական փորձն արվեց (նախորդները տեղի էին ունեցել 1201 և 1203 թվականներին): 1208–ին Անտիոքի լատին պատրիարք Պետրոս Անգուլեմացու նախաձեռնությամբ և «Հյուրընկալ ասպետների» աջակցությամբ Անտիոքի բնակչությունը ապստամբություն բարձրացրեց: Լևոն թագավորն ու Ռուբեն–Ռայմոնդը հայոց բանակի գլուխ անցած մտան Անտիոք, այստեղ Սուրբ Պետրոս մայր տաճարում Ռուբեն–Ռայմոնդը հանդիսավորապես օծվեց որպես Անտիոքի իշխան[3]: Սակայն այս հաղթանակը շատ կարճ տևեց:

Միջնաբերդը այդպես էլ չէր նվաճվել: Բոհեմունդ IV–ն ու իր կողմնակիցները ամրացել էին այնտեղ և ընդամենը մի քանի օրվա ընթացքում կարողացան քաղաքից դուրս մղել Ռուբեն–Ռայմոնդի կողմնակիցներին[4]: Չնայած դրան, ակնհայտ էր, որ եթե այլ կողմերից օգնություն չհասնի Բոհեմունդ IV–ին, Լևոն Մեծագործը վաղ թե ուշ գրավելու է Անտիոքը, իսկ դա կնշանակեր անմիջական սպառնալիք Հալեպի և ողջ Հյուսիսային Ասորիքի համար:

Կիլիկիայի հայկական թագավորության ռազմական հաղթանակները անհանգստացրել էին Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը, մանավանդ որ դեռևս 12–րդ դարի 90–ական թվականներին Լևոն Ա–ը նրանից խլել էր

2 Երբեմն անվանում են նաև «Հիվանդախնամներ»:

3 Տես Acta Innocentii PP. III (1198-1216). E. registris Vaticanis aliisque Eruit, introductione auxit, notisque illustravit P. Theodosius Haluščynskyj hieromonachus ordinis Basiliani S. Iosaphat E pontificia commissione ad redigendum C.I.C.O., Fontes series III, vol. II, Vaticanis, 1944, pp. 589–590.

4 Տես **Rene Grousset**. Histoire des croisades, III, 1188-1291, L'anarchie franque, Paris, 1936, p. 279–280.

մի շարք լեռնային ամրոցներ: Վերոհիշյալ պատերազմից շատ չանցած, Իկոնիայի սուլթանությունը միացավ հակակիլիկյան պետությունների դաշինքին (այդպիսի մի դաշինքի մասին էր խոսվում դեռևս 1201 թվականին՝ Իննոկենտիոս III պապին Լևոն Մեծագործի ուղարկած նամակում[5]): Օգտվելով այն հանգամանքից, որ հայերը իրենց հիմնական ուժերը փոխադրել էին հարավ՝ դեպի Անտիոք, Իկոնիայի սուլթանը հարձակումներ էր գործում Կիլիկիայի հյուսիսային սահմանամերձ բերդերի վրա:

Հայտնվելով թշնամական օղակի մեջ՝ Կիլիկիայի վերնախավը պիտի դիմեր ոչ սովորական քայլերի՝ փորձելով ներգրավել այնպիսի ուժերի, որոնք իրենց ռազմաքաղաքական հզորությամբ կամ հեղինակությամբ ի վիճակի կլինեին ազդել «Անտիոքյան պատերազմ»-ի մեջ ներգրավված հակակիլիկյան դիրքորոշում որդեգրած պետությունների վրա:

Լևոն Մեծագործը թե՛ որպես իշխանապետ և թե՛ որպես թագավոր իր գահակալման ողջ ընթացքում մեծ կարևորություն է տվել պաշտոնական (հաճախ նաև գաղտնի) նամակագրությանը՝ որպես դիվանագիտական հզոր զենք: Պետք է ասել, որ թե՛ նա և թե՛ նրա հետ համագործակցած Հայոց կաթողիկոսները (Գրիգոր Դ Տղա, Գրիգոր Զ Ապիրատ) մեծ հմտությամբ կիրառել են այդ միջոցը հրատապ խնդիրներին լուծում գտնելու, աջակիցներ, դաշնակիցներ կամ հովանավորներ ձեռք բերելու նպատակով:

Այս առումով հայտնի են Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի նամակները (անշուշտ Լևոն Բ-ի հետ համաձայնեցված) ուղղված Սալահ ալ-Դին սուլթանին՝ այն պահին, երբ III խաչակրության օրերին Կիլիկիան գտնվում էր խաչակիրներ-մահմեդականներ մեծ հակամարտության կիզակետում[6]:

Այնուհետև արդեն Հայոց թագավորության հռչակումից հետո (1198 թ.) Լևոն Ա-ի նախաձեռնությամբ սկսվում է աննախադեպ բուռն նամակագրություն Ինոկենտիոս III պապի հետ, որի ընթացքում Հայոց թագավորը ձգտում էր ստանալ պապի աջակցությունը Անտիոքի գահին Ռուբեն-Ռայմոնդի հաստատման հարցում, իսկ պապն էլ փորձում էր Կիլիկյան Հայաստանի ուժերը ուղղորդել դեպի համաքրիստոնեական խնդիրների լուծում՝ Երուսաղեմի ազատագրում և այլն: Պապի դրական դիրքորոշումը Ռուբեն-Ռայմոնդի հանդեպ անշուշտ որոշակի դեր խաղում էր (օրինակ Անտիոքի լատին պատրիարքի և «Հյուրընկալ ասպետների» աջակցությունն ապահովելով), սակայն արդեն 1208-ին Լևոն Ա-ի համար ակնհայտ էր, որ Պապի միջամտությունը բավարար չէ իր խնդիրները լուծելու համար և իրականում շատ ավելի կարևոր է խանգարել երեք պետությունների հակակիլիկյան դաշինքի ձևավորմանը: Մինչ այդ Լևոնը փորձել էր առանձինառանձին պատերազմել թե՛ Տրիպոլիսի կոմսության, թե՛ Իկոնիայի և թե՛ Հալեպի դեմ, բայց դա ժամանակավոր լուծում էր տալիս, քանի որ տվյալ պետությունը 2-3 տարով հետ քաշվելուց հետո, կրկին, առաջին իսկ հնարավորության դեպքում, միանում էր մյուս երկուսին Կիլիկիայի դեմ պայքարում:

Կարևոր է նաև նշել, որ այդ նույն ժամանակ որոշ սառնություն էր

5 Տե՛ս Acta Innocentii PP. III, p. 560.

6 Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Վ.**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., Եր., 1994, էջ 98-104:

նկատվում Հռոմի հետ հարաբերություններում, քանի որ Լևոն Ա-ն, իրեն բավականաչափ ուժեղ զգալով, սկսել էր դուրս մղել կաթոլիկ հոգևորականությանը Կիլիկիայից: 1208-1213 թթ. ընթացքում նաև նամակներն են սկսում զգալիորեն պակասել Կիլիկիայի և Հռոմի միջև, մանավանդ եթե համեմատենք 1199-1201 թթ. հետ: Ահա հենց այս պահին է, որ Լևոն Մեծագործը սկիզբ է դնում մի այլ միջպետական հարաբերության: Նա նամակով դիմում է Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլին:

Հայոց թագավորի նախաձեռնած նամակագրության և դրա արդյունքում նրա դրական ձեռքբերումների մասին բացառիկ կարևոր տեղեկություններ է հաղորդում 13-րդ դարի արաբ պատմիչ Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը: Ըստ նրա՝ վերոհիշյալ քաղաքական կացության մեջ հայտնված Լևոն Ա-ն դիմեց Եգիպտոսի ալ-Մալիք ալ-Ադիլի միջնորդությանը: Վերջինս նամակներ գրեց Իկոնիայի սուլթան Քեյխոսրովին և Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Զահիրին՝ համոզելով նրանց, որ Լևոն Ա-ի հետ հաշտություն կնքեն: Եվ դա իրականացավ: Ըստ հաշտության՝ Լևոն թագավորը պիտի վերադարձներ Բաղրասը «Տաճարականներին», չմիջամտեր Անտիոքի գործերին և վերադարձներ Քեյխոսրովի՝ իր երկրից արտաքսված վիճակում (եղբոր՝ Ռուքն ալ-Դինի իշխանության (1196-1204) օրոք)[7], Կիլիկիայում թողած ու կիլիկեցիների կողմից յուրացված ունեցվածքը[8]:

Ըստ Անանուն Եդեսացու՝ Քեյխոսրովի 1208 թ. հարձակումը ձեռնարկվել էր ի պատասխան Լևոն Ա-ի կողմից սելջուկների մի զորաբանակի ջախջախման: Ըստ ասորի պատմիչի՝ Հայոց թագավորը, տեղեկանալով, որ Քեյխոսրովը Կիլիկիան ասպատակելու նպատակ ունի, նախապես դարանակալելով ու ծուղակի մեջ գցելով՝ կոտորեց սելջուկ թուրքերի զորաբանակը՝ մեծ թվով գերիներ վերցնելով ու խլելով մեծաքանակ ավար: Եվ միայն դրանից հետո է Քեյխոսրովը գրավել Բերդուսը[9]: Չի բացառվում, որ այստեղ շփոթություն կա, այսինքն՝ պատմիչը Ռուքն ալ-Դինի օրոք (1203-1204) տեղի ունեցած իրադարձությունները հնարավոր է, որ շփոթում է հինգ տարի անց՝ Քեյխոսրովի օրոք կատարվածի հետ:

Այսպիսով, Կիլիկիան առնվել էր թշնամական պետությունների օղակի մեջ. արևմուտքից, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ Իկոնիայի սելջուկյան սուլթանության, հարավից ու հարավ-արևելքից՝ Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Հալեպի սուլթանության կողմից:

Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմի «Հալեպի պատմության» մեջ կարդում ենք. «Եվ ուրեմն Քեյխոսրով իբն Կըլըջ Արսլանը ուղղվեց դեպի «Իբն Լևոնի» երկիրը, միաժամանակ օգնություն խնդրեց սուլթան ալ-Մալիք ալ-Զահիրից, և սա զորք ուղարկեց Սայֆ ալ-Դին իբն Ալիմ ալ-Դինի հրամանատարությամբ և նրան ընկերակցում էր Այբեք Ֆատիսը: [Սրանք] հա-

7 Ռուքն ալ-Դինը մահացել է 1204-ին, հետևաբար հիշատակվող իրադարձությունները տեղի են ունեցել մինչև այդ:

8 Տես **Kamal ad-Din Ibn al-Adim**, Tarikh ul-Halab, Damas, t. III, 1968, p. 160 (այսուհետև՝ Kamal ad-Din Ibn al-Adim, Tarikh ul-Halab, t. III).

9 Տես Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, **Անանուն Եդեսացի**, Ժամանակագրություն, Եր., 1982, թարգմ. **Լ. Տեր-Պետրոսյանի**, էջ 171 (այսուհետև՝ **Անանուն Եդեսացի**, Ժամանակագրություն):

վաքվեցին Մարաշում ու պաշարեցին Բուրնուսը (Բերդուս) 605 (1208 թ. հուլիս 16 – 1209 հուլիս 6) թվականին, ապա գրավեցին այն, գրավեցին նաև մի շարք այլ բերդեր «Իբն Լևոնի» երկրից:

Լևոնը նամակ ուղարկեց ալ-Մալիք ալ-Ադիլին՝ հովանավորություն փնտրելով նրա մոտ, իսկ ալ-Մալիք ալ-Ադիլն էլ [իր հերթին] նամակներ ուղարկեց Քեյխոսրովին և ալ-Մալիք ալ-Զահիրին: Իսկ Քեյխոսրովը ընդառաջեց և հաշտություն կնքեց «Իբն Լևոնի» հետ այն պայմանով, որ [Լևոնը] վերադարձնի Բաղրաս ամրոցը Տաճարականներին, չմիջամտի Անտիոքի գործերին և վերադարձնի Քեյխոսրովի եղբոր՝ Ռուքն ալ-Դինի օրոք թողած ունեցվածքը[10]:

Եվ նա (Քեյխոսրովը)[11] [տարիներ առաջ] վախեցել էր իր եղբորից (Ռուքն ալ-Դինից), [ուստի] ուղղվել էր Հալեպ, որոշ ժամանակ կանգ առնելով ալ-Մալիք ալ-Զահիրի մոտ: Իսկ ալ-Մալիք ալ-Զահիրը վախեցել էր նրա եղբորից՝ Ռուքն ալ-Դինից, և զգուշացել, որ այդ պատճառով չփոխվի իր հանդեպ տրամադրությունը: Եվ միգուցե իրենից պահանջեին եղբորը և ինքը նրան չկարողանար հանձնել [եղբորը] ուստի իրենից հեռացրել էր նրան (Քեյխոսրովին): Եվ նա (Քեյխոսրովը) մտել էր «Իբն Լևոնի» [երկիրը], բայց վախենալով նրանից, փախուստ էր տվել՝ թողնելով նրա մոտ հսկայական գումար, ապա ստացավ այդ գումարը համաձայն վերոհիշյալ զինադադարի:

Եվ նա (Իբն Լևոնը) վերադարձրեց այն բոլոր մահմեդական գերիներին, որ գտնվում էին իր երկրում և այլևս հրաժարվեց ալ-Մալիք ալ-Զահիրի երկրի հանդեպ [ոտնձգություններից], իսկ Հալեպի օգնական գունդը Հալեպ հասավ (վերադարձավ)[12]»:

Եգիպտոսի սուլթանի միջնորդության մասին վկայում է նաև Անանուն Եդեսացին: Խոսելով Լևոն Ա-ի կողմից Իկոնիայի սելջուկների զորաբանակը դարանակալելու և կոտորելու, ապա ի պատասխան դրա, Իկոնիայի սուլթանի կողմից Բերդուսի գրավման մասին, ասորի պատմիչն ավելացնում է. «Գրավելով Բերդուս կոչվող բերդը, նա ուզեց մտնել երկրի խորքերը, բայց Մելիք ալ-Ադիլի միջնորդությամբ նրանց միջև հաշտություն կայացավ»[13]:

Հասկանալի է, որ Կիլիկյան Հայաստանը, որքան էլ որ ռազմաքաղաքական առումով հզորացած, ի վիճակի չէր պայքարելու երեք հարևան պետությունների դեմ միաժամանակ: Ակնհայտ էր, որ ինչպես այլ դեպքերում (օրինակ 1190-ին) Հայոց թագավորության վերնախավը պետք է դիմեր դիվանագիտական ոչ ստանդարտ քայլերի: Եթե 1190-ին նման քայլ կարելի էր համարել Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի ուղերձները սուլթան Սալահ ալ-Դինին, ապա այժմ նման մի քայլ կատարեց Լևոն Մեծագործը, այս անգամ արդեն դիմելով Այյուբյան արքայատոհմի հիմնադրի եղբորը՝ ալ-Մալիք ալ-Ադիլին, որը մի քանի տարի առաջ հաղթական դուրս գալով միջդինաստիական պայքարում, փորձում էր վերականգնել Սալահ ալ-

10 Խոսքը այն ունեցվածքի մասին է որ Քեյխոսրովը թողել էր Կիլիկիայում, երբ իր երկրից աքսորված վիճակում էր (նախքան 1204-ը):

11 Խոսքը մի քանի տարի առաջ տեղի ունեցած դեպքերի մասին է:

12 **Kamal ad-Din Ibn al-Adim**, Tarikh ul-Halab, t. III, p. 159-160.

13 **Անանուն Եդեսացի**, Ժամանակագրություն, էջ 172:

Դինի սուլթանության երբեմնի հզորությունը: Ճիշտ է, ի տարբերություն վերոհիշյալ նամակի (կամ նամակների) մեզ հայտնի չէ Լևոն Ա-ի 1208/1209 թ. ուղարկած նամակի մանրամասները, բայց պարզ է, որ այն նպատակ ուներ դուրս բերել Կիլիկիան թշնամական օղակից:

Իսկ ինչն էր հույս տալիս Լևոնին, որ այդ գրությունը կարող է դրական արդյունքի բերել: Նախ՝ չի բացառվում, որ սա Լևոն Ա-ի առաջին գրությունը չէր՝ ուղղված Այյուբյաններին կամ հենց նույն ալ-Մալիք ալ-Ադիլին[14], որը 1201-ից հետո ոչ միայն Եգիպտոսի տեր ու տիրակալն էր, այլև անառարկելի հեղինակություն, որպես գերագահ՝ սուլթան բոլոր Այյուբյանների մեջ: Ալ-Մալիք ալ-Ադիլն անշուշտ չէր կարող նպաստել, որ հայերը գրավեն Անտիոքը, բայց և իր շահերին դեմ էր Իկոնիայի սուլթանության չափից ավելի հզորացումը: Բանն այն է, որ 13-րդ դարի առաջին տասնամյակների Իկոնիայի սուլթանությունը կտրուկ տարբերվում էր 12-րդ դ. 70-80-ականներից[15]: Եթե այն ժամանակ Սալահ ալ-Դինը կարող էր Ռումի սելջուկների խնդրանքով արշավանք ձեռնարկել վերջիններիս աջակցելու համար, ապա այժմ Իկոնիան այնքան էր հզորացել (և այդ միտումը շարունակվեց մինչև 1243 թ.) որ կարող էր վտանգավոր և անվերահսկելի ուժ դառնալ ոչ միայն Կիլիկիայի, այլև հենց Այյուբյանների համար:

Ինչ վերաբերում է Հալեպի Այյուբյաններին, ապա սրանց նամակ ուղարկելու շարժառիթը մի փոքր այլ էր: Եգիպտոսի արդեն հզորացող Այյուբյանները իրենց առջև խնդիր էին դնում առիթը ներկայանալու դեպքում կարգի հրավիրել իրենց Հալեպի ճյուղին, որը բավականաչափ ինքնուրույն գոյատևում էր արդեն 14 տարի և նույնիսկ Հարավային Ասորիքին իշխելու հարցում ընդդիմանում էր Եգիպտոսին: Իր այդ քայլով ալ-Մալիք ալ-Ադիլն իր եղբորորդուն՝ ալ-Մալիք ալ-Զահիրին նաև հասկացնում էր, որ չմասնակցի Իկոնիայի սելջուկների արկածախնդիր քայլերին, այլ անհրաժեշտության դեպքում իր զինական օգնությունը ցույց տա համայայուբյան բնույթի ռազմարշավներին: Այս վերջին հանգամանքը ակնարկում է նաև պատմիչը՝ Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմը:

Մեծ հավանականությամբ Լևոն Մեծագործը լավ տեղեկացված էր այս բոլոր հարաբերությունների ու հակասությունների մասին: Նա նաև չէր պատրաստվում կատարել այն պայմանները, որոնց հիման վրա հաշտության պայմանագիր էր ստորագրել: Եվրոպացի հետազոտողը նշում է «ավելորդ է ասելը, որ համաձայնագրում նշված այդ պայմանները այդպես էլ պիտի մնային թղթի վրա»[16]: Համենայն դեպս Եգիպտոսի սուլթանին

---

14 Չի բացառվում, որ Լևոն Ա – ալ-Մալիք ալ-Ադիլ նամակագրությունն ու դիվանագիտական կապերը հաստատվել են նախքան 1208 թ.: Միաժամանակ 1207-1208 թվականները կարևոր ժամանակ էին Այյուբյանների տարածաշրջանային քաղաքականության ակտիվացման տեսակետից: Այդ ժամանակ է, որ ընդարձակվեցին ու ամրապնդվեցին Այյուբյանների դիրքերը Վերին Միջագետքում (Զազիրա), նրանք վերջնականապես տիրացան Խլաթին ու Վանա լճի ավազանին, միաժամանակ հետ մղելով Վրացական պետության և այլ հակառակորդների հարձակումները: Եվ այդ ամենը համընկավ Լևոն Ա-ի և Ռուբեն-Ռայմոնդի ղեկավարությամբ Անտիոքի ժամանակավոր գրավման հետ:

15 Հայտնի է, որ 1188 թ. Կիլիկ Արսլան II-ը մասնատեց երկիրը և որպես ժառանգական տիրույթ բաժանեց իր որդիների միջև, որի անխուսափելի արդյունքը երկպառակտչական պայքարն էր և սուլթանության թուլացումը ընդհուպ մինչև Քեյխոսրով I-ի երկրորդ գահակալումը (1205-1211): Տես **В. Гордлевский**, Государство сельджукидов Малой Азии, Москва-Ленинград, 1941, с. 29).

16 **Cahen Cl.** La Syrie du Nord et la principaute franque d'Antioche, Paris, Institut Francais de Damas. 1940, p. 614 (այսուհետև՝ Cahen Cl., La Syrie du Nord).

արված դիմումն իր ազդեցությունը գործեց և Կիլիկիան, առնվազն՝ ժամանակավորապես, փրկվեց մի քանի ճակատի վրա պատերազմելու ծանր հեռանկարից:

Իսկ Լևոն Ա թագավորը շարունակեց միջամտել Անտիոքի գործերին, մինչև որ 1216 թվականին գրավեց այն, մինչդեռ Բաղրասը շարունակում էր մնալ (համենայն դեպս 1212 թվականի համար կան հստակ վկայություններ) նրա տիրույթների մեջ[17]: 1209 թ. Լևոն Ա-ը Ռուբեն-Ռայմունդին հայտարարել էր գահաժառանգ, քանի որ արու զավակ չուներ: Դրանով նա փորձում էր մեկ պետության մեջ միավորել Կիլիկիան և Անտիոքը: 1210 թ. մահացավ Իկոնիայի սուլթան Քեյխոսրովը և Լևոն Մեծագործը անմիջապես միջամտեց նրա երկու որդիների միջև ծագած գահակալական պայքարին՝ ժամանակավորապես թուլացնելով իր գլխավոր հակառակորդներից մեկին:

Մինչ այդ Անտիոքում շարունակվում էր ներքին պայքարը: Բոհեմունդ IV-ը փորձում էր ամեն կերպ ազատվել իր հակառակորդներից: Եվ քանի որ նա 1208 թվականին բանտարկեց իր գլխավոր հակառակորդներից մեկին՝ Անտիոքի լատին պատրիարքին, նրա հարաբերությունները Հռոմի հետ սրվեցին: Բայց Բոհեմունդին այդպես էլ չհաջողվեց ազատվել իրեն ընդդիմադիր ուժերից, որոնք շարունակում էին աջակցել Ռուբեն-Ռայմոնդին, և Հայոց թագավորը շուտով հաջողության հասավ:

1216 թվականի փետրվարի 14-ին Լևոն Մեծագործը գրավեց Անտիոքը «արուեստիւ և իմաստութեամբ»[18], և այս անգամ արդեն ավելի երկար ժամանակով գահին բազմեցրեց Ռուբեն-Ռայմոնդին: Ինչպես գրում է Սմբատ Սպարապետը, Լևոն Ա-ը Անտիոքի իշխաններից ոմանց (այդ թվում և սենեշալ Ամորիին) մեծ պարգևներ խոստանալով իր կողմը գրավեց: Վերջիններս գիշերով բացեցին քաղաքի դարպասները և Լևոն Մեծագործը մեծ զորքով մտավ քաղաք: Ֆրանկների մեծ մասը ամրացավ ու դիմադրեց Անտիոքի միջնաբերդում, բայց շուտով ստիպված էր հանձնվել: Անտիոքի պատրիարքը քաղաքի մեծամեծների ուղեկցությամբ, Լևոն թագավորի գլխավորությամբ Ռուբենին բազմեցրին իշխանական գահին[19]:

Հետաքրքիր է Իբն Ուասիլ պատմիչի հաղորդումը այդ մասին իր «Այյուբյանների պատմություն» երկում. «Այս տարվա[20] Շավալ ամսին Հայոց արքան՝ «Իբն Լևոնը», տիրացավ Անտիոքին և լավ վարվեց տեղի բնակչության հետ և արդարություն գործադրեց: Նրա (Անտիոքի) տեր Բրինսը[21] բռնակալ մարդ էր և Իբն Լևոնի դիրքը բարձրացավ Անտիոքի ժողովրդի մոտ»[22]:

Անտիոքի գրավումը մեծ նվաճում էր Կիլիկիայի հայկական պետության համար: Թեև այն չմիացվեց Հայոց թագավորությանը, բայց գտնվում էր Լևոն Մեծագործի ազդեցության ներքո և այնտեղ մշտապես հայկական զորք կար: Անտիոքի գրավումը կարելի է համարել Լևոն Մեծագործի

17 Տես **Wilbrandi de Oldenborg**. Peregrinatio, in: Laurent, Peregrinatores medii aevi quatuor, Lipsiae, 1863, p. 174:

18 **Սմբատայ Սպարապետի** Տարեգիրք, Վենետիկ, ս.Ղազար, 1956, էջ 219 (այսուհետև՝ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք):

19 Տես **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 219:

20 Հիջրայի 612 թվական (1215 թ. մայիս 2 – 1216 մարտ 22):

21 Նկատի ունի Բոհեմունդ IV Միականուն:

22 **Jamal al-Din Muhammad Ibn Wasil**, Mufarrij al-Kurub fi Akhbar Bani Ayyub (History of the Ayyubids), v. III, Cairo, 1960, p. 233 (այսուհետև՝ Ibn Wasil).

հզորության գագաթնակետը: Սա Հայոց թագավորության ոչ միայն ռազմական, այլև դիվանագիտական հաղթանակն էր: Առաջին հերթին ճիշտ էր ընտրված Անտիոքի գրավման պահը: Սկսվել էր խաչակրաց V արշավանքը (1213-1221 թթ.), որն անկախ իր ուժգնությունից ու արդյունավետությունից, պիտի ստիպեր Այյուբյաններին կենտրոնացնել իրենց ուժերն այդ ճակատում: Հետևաբար հույս կար, որ Հալեպի ուժերը ամեն անգամվա պես չէին կարող օգնության հասնել Բոհեմունդ IV-ին: Այնուամենայնիվ, հենց որ հայկական զորքը տիրեց քաղաքին, Լևոն թագավորը Անտիոքում եղած գերի մահմեդականներին անմիջապես ուղարկեց Հալեպ՝ ալ-Մալիք ալ-Զահիրին, կանխելով Հալեպի տիրոջ հավանական միջամտությունը[23]: Այդ միջամտությունը բոլորովին չեզոքացվեց երբ պարզ դարձավ, որ Հայոց թագավորը հասցրել է նաև հող նախապատրաստել Եգիպտոսի սուլթանի մոտ, մի հանգամանք, որը զսպեց Հալեպի Այյուբյան սուլթանին:

Այս նույն իրադարձությունների մասին է գրում XIII դարի արաբագիր պատմիչ Իբն Ուասիլը. « և նա (Լևոնը) ազատ արձակեց մի խումբ մահմեդական գերիների, որոնք գտնվում էին Անտիոքում և նրանց տեղափոխեց [Հալեպ] և հաշտություն եղավ իր և ալ-Մալիք ալ-Զահիրի միջև»[24]:

Միաժամանակ 1216-ին Լևոն Մեծագործը վերականգնեց իր սերտ հարաբերությունները նաև լատին եկեղեցու հետ՝ վերահաստատելով Տարսոնի և Սամեստիայի լատին եպիսկոպոսական աթոռներն ու Բաղրասը այնուամենայնիվ վերադարձնելով «Տաճարականներին»[25]: Սա Կիլիկյան Հայաստանի վարած ճկուն դիվանագիտության բարձրակետն էր:

Անտիոքի գրավման լուրը Հալեպում խուճապ առաջացրեց: Ալ-Մալիք ալ-Զահիրը դիմեց Իկոնիայի սուլթան Քեյքաուսին[26] և Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլին՝ միացյալ արշավանքի կոչ անելով ընդդեմ Լևոն Ա-ի թագավորության: Թեև այս անգամ արդեն նա ալ-Ադիլի հետ մեծ հույսեր չէր կարող կապել, քանի որ, ինչպես գրում է Իբն ալ-Ադիմ պատմիչը. «Եվ նա (ալ-Մալիք ալ-Զահիրը) ուղղվեց Եգիպտոս: Եվ սուլթանը փոստաձիեր պատրաստեց որպեսզի թարմ լուրեր ստանա, թե ինչ է պատահում իր հորեղբոր (ալ-Մալիք ալ-Ադիլի) հետ, որպեսզի իր անելիքն իմանա, եթե նրա կողմից որևէ կասկածելի քայլ նկատի: Եվ ինքն էլ անձնապես դիմեց Քեյքաուսին, և այս բոլոր եղածի մեջ իր նպատակն էր բանակը պատրաստ վիճակի մեջ պահել և պատրաստ լինել Քեյքաուսին ընդառաջ գնալու և միանալու նրան առաջին հերթին [հարձակվելու] համար «Իբն Լևոնի» երկրի վրա: Եվ «Իբն Լևոնը» տիրել էր Անտիոքին և սուլթանը հայտնվեց անելանելի կացության մեջ իր հարևանի սահմանակից լինելու պատճառով, քանի որ գիտեր, որ [Լևոնը] իր (ալ-Մալիք ալ-Զահիրի) հորեղբոր

23 Տես **Cahen Cl.**, Na Syrie du Nord, p. 621.
24 **Ibn Wasil**, v. III , p. 233.
25 Տես Ibn Wasil, v. III, p. 233: Այս ամրոցի պատճառով Լևոն Ա-ը անվերջանալի վեճերի մեջ էր «Տաճարական ասպետների» հետ և նույնիսկ Հռոմի պապերի հետ այդ հարցը Լևոնի ունեցած հիմնական տարաձայնությունն էր:
26 Ըստ Իբն Ուասիլի՝ ընդհակառակը, Քեյքաուսն է դիմում ալ-Մալիք ալ-Զահիրին, որ միասնաբար հարձակվեն ու ազատեն Անտիոքը Լևոն թագավորից: Ի պատասխան այս նախաձեռնության ալ-Մալիք ալ-Զահիրը առաջարկում է, որ Իկոնիայի սելջուկները Հայոց թագավորության վրա հարձակվեն Մարաշի կողմից իսկ իրենք՝ Այյուբյանները՝ Դարպսակի:

(ալ-Ադիլի) հովանու տակ էր»[27]:

Ուշագրավ է Իբն Ուասիլի տեղեկությունը, որը բացահայտում է ինչպես ալ-Ադիլի և ալ-Զահիրի ներքին հակասությունները, այնպես էլ Եգիպտոսի Այյուբյան սուլթանի խաղացած դերը Հալեպը Իկոնիայի սուլթանության խաղերից հեռու պահելու, հետևաբար Կիլիկիայի վրա հարձակումը զսպելու տեսակետից: Պատմիչը նշում է. « Ալ-Մալիք ալ-Զահիրը մարդ ուղարկեց ալ-Մալիք ալ-Ադիլի մոտ որպեսզի խորհրդակցի այդ հարցի[28] մասին, բայց ալ-Ադիլը մերժեց նրա տեսակետը (գաղափարը) և հայտնեց, որ նրան (ալ-Մալիք ալ-Զահիրին) անգամ չի ցանկանում տեսնել: Եվ իմացրեց, թե այս հարցի մեջ ինչ չար գործեր (խարդավանքներ) կան»[29]:

1216-ին վերաբերող հաղորդումները գալիս են հաստատելու նաև նախորդ հիշատակումները Լևոն Ա - ալ-Մալիք ալ-Ադիլ հարաբերությունների մասին, որ վերաբերում են 1208-ին, երբ հենց ալ-Մալիք ալ-Ադիլի միջամտությամբ Լևոն Ա-ը հաշտություն կնքեց Իկոնիայի և Հալեպի սուլթանների հետ:

Արաբ պատմիչների տեղեկությունները հուշում են, որ եթե 1208 և 1216 թվականներին այս երկու միապետների միջև կային սերտ հարաբերություններ և նամակագրություն, ապա կարելի է ենթադրել, որ այդ հարաբերությունները տևական բնույթ ունեին, առնվազն հիշյալ ութ տարիներին, հավանաբար նաև դրան հաջորդող շրջանում:

Թեև նամակների բովանդակությունը մեզ հայտնի չէ, սակայն կարելի է ենթադրել, որ Լևոն Ա-ը կարող էր նույնիսկ ձևականորեն ճանաչել Եգիպտոսի սուլթանի գերագահությունը: Մի բան, որ նրան որևէ ձևով չէր պարտավորեցնում, քանի որ ալ-Մալիք ալ-Ադիլի սուլթանությունը Կիլիկիային սահմանակից չէր, իսկ նրա կենտրոնը շատ հեռու էր Հայոց թագավորությունից: Լևոն Ա-ը շատ լավ տեղյակ էր Այյուբյան տոհմի տարբեր ներկայացուցիչների միջև ներքին հարաբերություններից, և նրա խնդիրն էր ամեն գնով հասնել նրան, որ Այյուբյանների գերագահ սուլթանը զսպի իր եղբորորդուն, դրանով իսկ չեզոքացնելով հակակիլիկյան եռյակ դաշինքի հանգուցային անդամին:

Այս անգամ Հալեպի Այյուբյանները զգուշացան հարձակում գործել հայկական ուժերի վրա, քանի որ ոչ միայն չստացան Եգիպտոսի աջակցությունը, այլև կարող էին հարուցել գերագահ սուլթանի զայրույթը իրեն մտերիմ միապետի դեմ պատերազմ սկսելու համար: Ավելին, արդեն այն բանից հետո երբ Եգիպտոսի սուլթանը սաստել ու կարգի էր հրավիրել իր եղբորորդուն, Հալեպի տերը հանկարծ նամակ է ստանում հենց Լևոն թագավորից: Այս տեղեկությանը մենք հանդիպում ենք միայն Իբն Ուասիլի մոտ:

Ըստ արաբ պատմիչի՝ Լևոն Ա-ը իր բարեկամությունը և նույնիսկ հավատարմությունն է հայտնում Այյուբյաններին: Խնդրում է ազատել իրեն

27 **Kamal ad-Din Ibn al-Adim**, Tarikh ul-Halab, t. III, p. 168-169.
28 Խոսքը Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի վրա Իկոնիայի՝ Տրիպոլիսի հետ համաձայնեցված հարձակման մասին է:
29 **Ibn Wasil**, v. III , p. 233

հարձակումներից, միաժամանակ հիշեցնում է ալ-Մալիք ալ-Զահիրին, որ երբ նա երկիցս իր բոլոր զորքերը ուղարկել էր Դամասկոսը գրավելու և երկրում զինվոր չէր մնացել, Լևոնը կարող էր ազատորեն ներխուժել իր երկիրը և մեծ վնասներ պատճառել, բայց ինքը չի արել այդ բանը՝ դրանով իսկ ծառայություն մատուցելով Այյուբյաններին: Անմիջապես էլ ավելացնում է, որ իր ծառայություններն ավելին են քան Բոհեմունդինը, որի հետ ալ-Զահիրը դաշնակցում է: Լևոն Ա-ն իր պարտքն է համարում նաև ավելացնել որ Անտիոքում իր փոխարեն նշանակված Ռուբեն-Ռայմունդին ևս թելադրել է, որ հավատարիմ մնա Այյուբյաններին[30]:

Սա իր տեսակի մեջ բացառիկ մի նմուշ է մահմեդական պետությունների միապետների հետ դիվանագիտության, որի մասին վկայությունները (ինչպես և 1190-ին Գրիգոր Տղայի Սալահ ալ-Դինին ուղարկած նամակի պարագայում) պահպանվել են միայն արաբ պատմիչների մոտ:

Իբն ալ-Ադիմի և Իբն Ուասիլի վերոհիշյալ հաղորդումներից կարելի է եզրակացնել, որ 1208-ից հետո էլ Լևոն Մեծագործը բարեկամական հարաբերություններ է պահպանել Այյուբյան սուլթանի հետ, քանի որ ութ տարի անց ևս այդ կապը իր դերը խաղաց: Եթե նկատի ունենանք ալ-Մալիք ալ-Ադիլի քաղաքական կշիռը մերձավորարևելյան հարցերում և այն, որ նա շահագրգռված չէր կարող լինել Կիլիկիա-Անտիոք միացյալ պետության ստեղծմամբ, վերոհիշյալ լավ հարաբերությունների պահպանման մեջ հիմնական դերը պիտի վերագրել Լևոն թագավորին՝ այն համարելով դիվանագիտական լուրջ նվաճում:

Վահան Ա. Տեր-Ղևոնդյան – Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Կիլիկյան Հայաստանի XII –XIII դարերի պատմության հիմնահարցերը: Մասնավորապես զբաղվում է Կիլիկիա-արաբական երկրներ փոխհարաբերություններով, Կիլիկիայի հայկական պետության առնչություններով Մերձավոր Արևելքի խաչակիր և մահմեդական պետությունների հետ: Հեղինակ է «Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ.» մենագրության (1994 թ., ֆրանսերեն՝ 2005 թ., արաբերեն՝ 2012 թ.): Հեղինակակից է «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ)» (2016 թ.) կոլեկտիվ մենագրության:

30 Տես **Ibn Wasil**, v. III, p. 235.

Summary

THE FACTOR OF THE AYYUBID SULTANATE OF EGYPT IN THE FOREIGN POLICY OF CILICIAN ARMENIA (1208–1216)

Vahan A. Ter–Ghevondian

Key words – Levon I, Al–Malik al–Adil, Kingdom of Cilician Armenia, Ayyubid sultanate of Egypt, Antioch, County of Tripoli, Seldjuk sultanate of Iconium, Ayyubid sultanate of Aleppo, Ibn al–Adim, Ibn Wasil.

Immediately after the proclamation of the kingdom of Cilician Armenia (1198), Levon I (1198–1219) made his main goal to support Ruben–Raymond, his brother's grandson, to become Prince of Antioch, as he was the heir at law according to the agreement signed between the two states. But the claims of Cilician Armenia on Antioch contradicted to the political interests of the neighboring countries – County of Tripoli, Seldjuk sultanate of Iconium and the Ayyubid sultanate of Aleppo. In 1201–1203 a tripartite alliance was formed against Cilicia lasting up to 1216.

King Levon was not going to give up his plans. From the other side Cilicia found itself in a hostile encirclement. It was impossible to come out from it only with military means. That is why Levon I initiated a very active foreign policy towards both Christian and Moslem states. One of the important lines of such an activity was the relation with the Ayyubid sultanate of Egypt. Levon I with the help of correspondence established friendly relations with the sultan of Egypt al–Malik al–Adil. These relations played important role in 1208 and 1216 in the struggle for control over Antioch. Some Arab and Syrian sources, first of all historians of XIII c. Ibn al–Adim and Ibn Wasil have valuable reports on that issue.

Резюме

ФАКТОР ЕГИПЕТСКОГО АЙЙУБИДСКОГО СУЛТАНАТА ВО ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ (1208–1216 гг.)

Ваан А. Тер–Гевондян

Ключевые слова – Левон I, Ал–Малик ал–Адил, Киликийское армянское царство, Египетский Аййубидский султанат, Антиохия, Триполийское графство, Иконийский султанат, Алеппский Аййубидский султанат, Ибн ал–Адим, Ибн Васил.

Сразу после провозглашения Киликийского армянского царства (1198) первостепенной задачей Левона I (1198–1219) стало возведение на Антио–

хийский трон своего внучатого племянника Рубен–Раймонда, являющегося, согласно мирному договору между двумя государствами, его законным престолонаследником. Однако претензии Киликийской Армении на Антиохию шли вразрез с политическими интересами соседних стран – Триполийского графства, Иконийского сельджукского султаната и Алеппского Аййубидского султаната. В 1201–1203 гг. был образован тройственный антикиликийский союз, просуществовавший до 1216 года.

Но царь Левон не собирался отказываться от своих планов. С другой стороны Киликия, по существу, оказалась во вражеском окружении, из которого невозможно было выйти только лишь с помощью военных средств. Поэтому Левон I стал инициатором очень активной внешней политики как с христианскими, так и с мусульманскими государствами. Одним из таких ключевых направлений являлся Египетский Аййубидский султанат. Левон I с помощью переписки наладил дружественные взаимоотношения с султаном ал–Малик ал–Адилом, которые сыграли важную роль в 1208 и 1216 годах в борьбе за Антиохию. В исторических сочинениях арабских и сирийских авторов, и в первую очередь у историков XIII века Ибн ал–Адима и Ибн Васила содержатся ценные сведения об этих событиях.